

ՁԵՌՔԻ ԵՒ ՊԱՐՏԻՋՊԱՆԱԿԱՆ ԱԺԽԱՏԱՆՔԸ ԴԱՍՏԻԱՐԱ- ԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ա. ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ ¹)

Զւիցերիայում այս շարժումը սկսեց 1882 թւից և 1884 թւին առաջին անգամ ուսուցիչների համար դասընթացներ բաց-
ւեցան: 1893 թւին Զւիցերիայում կային 198 այդպիսի ուսում-
նարաններ, որոնցից 6-ը ուսուցչական սեմինարիաներին կից, 3-ը
ռէալ ուսումնարաններին, 26-ը ուրիշ միջնակարգ դպրոցներին,
իսկ 41-ը անկախ հիմնարկութիւններ էին: Այդ դպրոցներն աչ-
ցելում էին 7.000 աշակերտ: Փրնեւի կանտոնում բոլոր հիմնար-
կութիւնների մէջ աւանդողները բացառապէս դպրոցների ուսու-
ցիչներ էին: 1896 թւին Բերնի կանտոնում, նոյնպէս և ուրիշ կան-
տոնների համար պարտադիր դարձրին:

Փրանսիա: Այսօրեղ 1882 թւին արդէն օրէնքով բոլոր զըպ-
րոցների համար ձեռքի աշխատանքը պարտադիր համարեց, որպէս
դպրոցի միւս առարկաների նման անհրաժեշտ մաս. իսկ 1884-ից
դա ուսուցչական սեմինարիաների համար ևս պարտադիր եղաւ:
Յփադիսփիկական տեղեկութիւններից երևում է, որ ժողովրդական
դպրոցները 1890 թ-ին 20.000 էր. իսկ միայն Պարիզում նոյն
թւականին 40.000-ից աւելի աշակերտներ կային, բացի ծաղկոց-

¹. Տես Մուրճ 1899 թ. № 1.

ների 23.000 մանուկներից, որոնք բոլորն էլ ձեռքի աշխատանքին մասնակից էին: Պարիզի այդ դպրոցների ձեռքի աշխատանքի համար կառավարութիւնը ծախսել է 486.000 ֆրանկ:

Բելգիա: Այստեղ 1884 թ-ի դպրոցական օրէնսդրութեան համաձայն որոշւեց ձեռքի աշխատանքը միջնել դպրոցներում և այն օրից բազմաթիւ դպրոցներին կից բացւեցին ձեռքի աշխատանքի փոքրիկ հիմնարկութիւններ իր բոլոր պարագաներով: Կառավարութիւնը ընդհանուր ծախսի մի մասը յանձն էր առել. իսկ ուսուցչական սեմինարիաներում և ճեմարաններում նա ներմուծւեց որպէս անհրաժեշտ մաս:

Անգլիա: 1890 թւականին, որպէս կրթական անհրաժեշտ պահանջ, որոշւեց դպրոցների մէջ ձեռքի աշխատանքը կարելոյն չափ տարածել և այդ պատճառով, բացի մասնաւոր դպրոցներից, այլ և ուսուցչական սեմինարիաներում ուսուցիչներ պատրաստել: 1893 թւին 353 դպրոցների մէջ միաւ սա, ուր 17.875 աշակերտ էր յաճախում:

Գերմանիա: 1891 թւականի ստատիստիկան ցոյց է տալիս, որ ամբողջ կայսրութեան մէջ գոյութիւն են ունեցել 328 արհեստական դպրոցներ: Սրանցից 126-ը պահում է զանազան մարդկանց հսկողութեան տակ. 9-ը կապւած է բարձրագոյն դպրոցների հետ, 12-ը ուսուցչական սեմինարիաների, 40-ը ժողովրդական դպրոցների, իսկ մնացած 141 այս կամ այն դատարարական դպրոցի հետ:

Ռուսաստանումն էլ ձեռագործի աշխատանքը սկսեց առաջ գնալ. 1884-ին ուսուցչական ճեմարանում մուտք գործեց և ապա տարածւեց գաւառներում. այնպէս որ 1894 թւին ուսուցիչներ պատրաստող 75 հիմնարկութիւններից 31-ի մէջ ընդունւեց: Վերջերումս պատերազմական միջոցներով իսկապէս կադէտների հիմնարկութիւնների մէջն էլ միջնել սկսեց, այնպէս որ մինչև 1896 թ. 23 այդ տեսակ ուսումնարանների մէջ պարտադիր եղաւ:

Ռումինայում ու Բուլղարիայում 1893-ին ձեռքի աշխատանքը բոլոր դպրոցների համար պարտադիր եղաւ. նոյնը տարածւեց նաև Սերբիայում:

Ձեռքի աշխատանքը ամենից շատ տարածւած և բազմակողմանի դարձրած է Հիւսիսային Ամերիկայում: Այնտեղ, բացի մաս-

նաև որ հիմնարկութիւններէց, տարածած է ուսուցիչ պատրաստող բոլոր բարձրագոյն դպրոցներում և միջնակարգ ու ստորին ուսումնարաններում: Այս երկրում կառավարութիւնը ինքն էլ շատ է օգնում. նոյնպէս համայնքներն, ընկերութիւններն և մասնաւոր մարդիկ նպատուում են տարածելուն:

Բացի յիշեալ պետութիւններէց ձեռքի աշխատանքը տարածած է նոյնպէս Իսպանիայում, Պորտուգալիայում, Իտալիայում, Բրազիլիայում, Ուրագւայում, Ճապոնիայում և ուրիշ երկիրներում:

Այս համառօտ պատմական տեղեկութիւններէց ընթերցողը պարզ կերպով կը տեսնի աշխատանքի աստիճանաբար զարգացումը և նրա ներկայ դրութիւնը: Թէ դրանք ինչ նշանակութիւն ունին, ինչ դեր են խաղում մարդու դաստիարակութեան և կեանքի համար, այդ մասին առանձին առանձին խօսելը իմ նպատակը չէ. թէև այդ արհեստները այսօր ամեն մի քաղաքակիրթ հասարակութեան մէջ օգտակար և անհրաժեշտ բան են համարուում և օրէցօր աւելի ու աւելի ծաւալ ստանում:

Յօդածիս վերնագրից էլ երևում է, որ ես ի նկատի ունիմ միայն պարտիզպանական աշխատանքը դպրոցական կրթութեան մէջ: Պարտիզպանական աշխատանքը ես կրկնակի նպատակով եմ ընտրել. այն է.

I. Եթէ մենք ինկատի ունենանք մեր թեմական դպրոցները և Վէորդեան ձեմարանը, պարզ կը տեսնենք որ աշակերտների մեծագոյն մասը գիւղական դասակարգից են. հետևապէս սա նրանց համար կեանքի մի անհրաժեշտ պահանջ է: Գրանով թերևս առիթ լինի դպրոցաւարտ աշակերտներին կապել իրանց գիւղի, բնակավայրի, հողի և անմխիթար դրութեան մէջ ընկած սոսի Ժողովրդի հետ: Թերևս դրանով նրանցից շատերն ազատեն Բագու, Անգրըկասպեան երկիրները կամ Կովկասի այս ու այն քաղաքը թափառելուց, իրանց ոչ ժն ու ծաղիկ երկրաստարդութիւնը լիզուր տեղը օրական պարէն հալթալթելու համար կորցնելու անհրաժեշտութիւնից, այն ինչ նրանց սնունդ ու ուղ կրկին ու ծնողները նոյն անեկանելի սոսի դրութեան մէջ կը մնան, վաշխառուից կը կեղեքւին: Զէ որ այդ երկրաստարդները միջոց ունենալով գիւղերում մնալու իրանց Ժողովրդի համար օգնող ու առաջնորդող կարապետ-

ներ կարող են հանդիսանալ: Եւ միթէ այդ դպրոցները սրանով մասամբ գիւղական բահանայական հարցի լուծմանը նպաստած չեն լինիլ: Բահանայացածը դրանով միջոց կ'ունենայ փոքր ի շատի մարդավարի ապրել, գրականութեան հետ հաղորդակցութիւն ունենալ, ինքը առաջ գնալով առաջ կը տանէ նոյնպէս իրան յանձնած հօլը թէ բարոյապէս և թէ նիւթապէս:

II. Պարփիզպանական աշխատանքի համար անհամեմատ աւելի քիչ ծախս է պէտք և աւելի հեշտ է զլուխ բերել քան միւս աշխատանքները: Միւսնոյն ժամանակ այս աշխատանքը, բացի իր բարերար ազդեցութիւնից դպրոցում, կարեւոր է նաև գործնական և առօրին կեանքի ու ամեն մի անհատի համար. իւրաքանչիւր մէկը կը ցանկայ իր փոքրիկ կտոր հողի վրայ, եթէ ոչ բանջարեղէններ, գէթ թփեր, ծաղիկներ, ծառեր ունենալ և դրանցով զբաղել: Անգամ հող չունեցած դէպքում՝ նա կարող է իր այդ ցանկութիւններին ծաղկամաններով էլ գոհացում տալ, ևն:

Սա մի ճշմարտութիւն է որ մարդկային ցեղի կուլտուրական կեանքը միշտ ձգտում է առաջ գնալ, զարգանալ, լինի նա պետութեան, գիտութեան, գրականութեան և այլ բաների մէջ: Բնականաբար նոյնն էլ լինելու է դպրոցական կեանքի վերաբերմամբ. բայց նա բոլորովին այլ, ինքնուրոյն զարգացում ու առաջադիմութիւն ունի: Իրօք, դպրոցը միանգամայն այլ բան է քան քաղաքագէտների պարլամենտներում կատարած գործերը, գիտութեան ու գեղարւեստի մէջ աշխատելը, արհեստի ու վաճառականութեան համար մեծ մեծ ծրագիրներ առաջարկելը, փիլիսոփաների, աշխարհի կամ աստղաբաշխների քննութիւններն ու հետազոտութիւնները: Այո՛ միանգամայն այլ բան է դպրոցը իր փոքրիկ, ըստերևոյթին աննշան ու համեստ դրութեամբ մի քանի պարզ ու հասարակ պատերի մէջ իր նախնական և գիտութեան ա-բ-գ-երով: Այստեղ ուսուցչի առաջ բոլորովին մի նոր աշխարհ է բացւում, նոր աշխարհ է նրա հանդէպ նստած, նոր կեանք, նոր սերունդ է այստեղ և այդ նախնական ա-բ-գ-ն նոր ձևով, նոր մեթոդով է աւանդելու, որի մասին նախորդ սերունդը քիչ գիտէր: Հին, անցած գնացած ժամանակի վերջն ու նոր ծնունդ առած ժամանակի սկզբնաւորութիւններն այստեղ են իրար ձեռք ձեռքի տալիս որպէս առուներ. որոնք մե-

ծանալով պէտք է աշխարհի անիւներն առաջ մղեն: Ահա նրանք այսօրեղից են սկիզբն առնում, այն մենացած մարդկանց ձեռքով: Այսպիսով դպրոցը լինում է նրանց առաջին ուղեցոյցն ու կարապետը: Ճշմարիտ է, կան մարդիկ որոնք այս դպրոցներին շատ քիչ նշանակութիւն են տալիս. բայց նրանց հիմքերն առաջ բերելը իմ աշխատանքի նպատակից դուրս է: Նոյն իսկ այդ դպրոցների ստորին դասարաններում սովորած մեր մեքենական արտաքին ձեւերը, ինչպէս գրիչ բռնելը, մարմնի դիրքը գրելիս, տառերի ձեւերը, թւանշանները և այլն մեր կեանքի մէջ պէտք են և մենք դրանցից չենք կարող հեռանալ: Նոյն այդ դպրոցներում, թէև քիչ, բայց և այնպէս մտաւոր ուղղութիւնը, զննական ուսումը, առարկաներ դիտելն այսօրեղից է սկսում, որոնք հետզհետէ ուղղութիւն ստանալով, բարեյաջող հետեւանքների կը հասնեն: Արդէն հոգեբանօրէն հաստատութեալ է, թէ որքան մեծ նշանակութիւն ունին առաջին մանկական հասակում կատարած գործերն և կրթութեան զօրեղ ազդեցութիւնը մարդու համար: Որչափ մարդ հասակաւոր լինի, կարծես այնչափ էլ թարմ մանկական կամ պատանեկական յիշողութիւններ կ'ունենայ. թէև նոյն անձնաւորութիւնը կեանքի միւս տարիների, նոյն իսկ մօտիկ անցեալի դէպքերը մոռացած կամ թոյլ կերպով կը չիշէ:

Հոգեկան հիւանդի համար էլ աւելի պարզ ու թարմ են մնում մանուկ կեանքի յիշողութիւնները, ինչպէս այս կամ այն ուստապեղին օտարութեան գնալը: Մինչև անգամ նա մահուան ժամերին մայրենի լեզուով է աղօթել սկսում. այն լեզուով որ գուցէ նա տասնեակ տարիներ չէր խօսել: Ահա այսպէս է ազդում նոյնպէս անշուշտ մարդու դպրոցական առաջին տարիների դասաւանդութիւնը իր կեանքի յետագայ տարիներում ևս՝ (թէև դա ոմանց համար կարող է բոլորովին անգիտակից կերպով լինել) որոշելով նրա կատարելիքներն ու մտածողութիւնները: Որչափ կուլտուրան առաջ գնաց, այնչափ էլ այս բանը աւելի կը ճանաչւի ու աչքի կ'ընկնի և այնչափ աւելի ուժ ու նշանակութիւն կը ստանան ժողովրդական և միջնակարգ դպրոցները: Ներկայ հանգամանքների ու պայմանների մէջ պէտք է ժողովրդական ու միջնակարգ դպրոցների մանկավարժութիւնը մեր կեանքի, նրա պահանջների ու ձգտումների հետ կա-

պիլ. նա պէտք է ժամանակի պահանջները միշտ ի նկատի ունենայ և կեանքի համար ծառայէ: Այս դպրոցը, մանաւանդ ժողովրդականը, պէտք է բուն գործնական կեանքին յետ դառնայ, որ նշանակում է դէպի բնութեան դիմէ:

Նոր ուղղութիւն պիտի տրւի դպրոցի առարկաներին. ինչպէս օրինակ տղաների համար ձեռքի աշխատանքի վարժութեան դասեր, իսկ աղջիկների համար եփելու և սնունդի պիտոյքներն հոգալու դաստիարակութիւն: Դպրոցական պարտիզպանութիւնը այս բանի հետ շատ կապ ունի: Եթէ այս պահանջները մանկավարժօրէն մի փոքր աւելի մօտից քննենք՝ այն ժամանակ կը տեսնենք, որ այս առարկաների մէջ զննողութեան համար մեծ նշանակութիւն ունեցող մեթոդիկական առաջադիմութիւն կայ գործնական կեանքի համար: Ինչպէս, օրինակ, ինչ բան է տղաների ձեռքի աշխատանքը՝ եթէ ոչ գծագրութիւնը և երկրաչափութիւնը կեանքի մէջ գործադրել: Եփելու դասերն ընտանեկան կեանքի մէջ ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ կուլտուրական աշխատանքը խոհանոցի մէջ գործադրել: Սա նշանակում է գործնական բնական ուսուցումն և բնական պարմութիւն. իսկ դպրոցական պարտիզպանական աշխատանքը կուլտուրական կեանքի ժամանակ մի գործադրւած բնական դիպուկութիւն է: Այսպէս, այս առարկաները միաժամանակ իրար հետ անմիջապէս կապւած են և չի կարելի մէկին կողմնակից լինել, միւսի դէմ կռւել, քանի որ բոլորն էլ ծառայում են դաստիարակութեան. իսկ աշխատանքը բնաւորութիւն զարգացնող գլխաւոր միջոցներից մէկն է, նոյն իսկ կեանք է: Ծուլանալ, ոչինչ չանել մահ է. սրա համար էլ մանկավարժութեան գլխաւոր նպատակներից մէկը բնաւորութեան կրթութիւնն է, մի բան՝ որ մեզանում մոռացութեան է տրւած: Գործնական, կուլտուրական աշխատանքը միայն կարող է դաստիարակութեան իդէալական նպատակին հասցնել: Արտաքին հանգամանքները, ինչպէս օրինակ փողի, նիւթականի, վարժ ուսուցչի և այլ բաների պակասութիւնը կարող են մեզ առ ժամանակ յետ կանգնեցնել այդ առարկաները ճիշտ իր ժամանակին գործադրելուց, սովորեցնելուց. բայց սա երբէք չի կարող զօրեղ պատճառ լինել այդ առարկաները ուսումնարանից հեռացնելու, բաժանելու: Փորձը միշտ ցոյց է տալիս, որ դրանք գործադրելի, հարկաւոր և օգտա-

կար են. այսպիսի իհարկէ ուշք պիտի դարձնի նաև ուսուցչի պատրաստականութեան վրայ, քանի որ սա էլ գլխաւոր տեղ է բռնում:

Ուսումնարանական պարպիզի կարևորութիւնը գուցէ շատերը լաւ հասկանան. սա զննողական ուսման ժամանակ լաւ միջոց է և ոչ պակաս նշանակութիւն ունի դաստիարակութեան համար: Շատերը այս աշխատանքից կարող են փախչել կամ նրա նշանակութիւնը հասկանալով կամ չուզենալով իրանց բոբիկութիւնը ցոյց տալ կամ չցանկանալով իբր թէ կեդրուելու Ոմանք էլ, որ աւելի հասկացող են համարուում, այդ չեն անում նրա համար, որ կարծում են թէ դրանով ուսումնարանի բարձր, վեհ, իդէալական նպատակը կը արորացնեն և իրանց երեւակայական գաղափարները կը կորչեն: Նակայն ամեն դէպքում էլ աշխատանքի դաստիարակութիւնը միշտ էլ կը մնայ դպրոցների գաղափարական հիմնական խնդիրը: Մանկավարժութեան յառաջ գնացած մասը չի կարող նորից չեւզ գնալ: Եթէ մենք այսօր առաջնայ պէս մանկավարժութեան նպատակ ընդունենք հասկացողութեան և զգացմունքի (հոգի) (Verstand und Gemüth) կազմակերպութիւնը, այլ նրա տեղ բնաւորութեան կրթութիւնը, այսինքն օգտակար գործելը, ապրելը, աշխատանքը՝ այն ժամանակ այլ ևս բնագիտութեան դասաւանդման մէջ չի կարող լոկ բնական առարկաների ճանաչելն ու համեմատելն նպատակ ընդունել: Դրա հետ մենք պէտք է մի քայլ էլ առաջ գնանք և բնութիւնը ճանաչել, տիրապետել կարողանանք, նոյն խել կուլտուրական աշխատանքը որպէս նպատակ ընդունենք: Այստեղ ի հարկէ հասկացողութեան կրթութեանը ոչ մի արգելք չի լինիլ, այլ դրանով իսկ կը սրւի ու կը կազմակերպուի: Եթէ, օրինակի համար, մի աշակերտ Ֆիզիկայից դասեր առնելով իրանից մի ելեքտրական մեքենայ, զանգակ կամ սրա նման մի բան շինէ, այն ժամանակ մի՞թէ ուսուցիչը նրան չի ասիլ, որ իրօք Ֆիզիկան լաւ է հասկացել. և մի՞թէ այս գործնական աշխատանքը նրա միտքը, հասկացողութիւնը աւելի չի սրիլ՝ քան լոկ մեքենայական կերպով սովորելը: Մարդ ակամայ ինքն իրան մտածում է՝—ուրեմն ինչո՞ւ համար միւս առարկաների հետ էլ այդպէս չվարւել, երբ գործնականը ամեն կողմից օգտակար է:

Բնագիտական դասերի շնորհիւ մենք տղայի հոգու մէջն էլ

ենք թափանցում, նրան մոռնող մատակարարելով: Վերջապէս ժամանակ է, պէտք է փորձել այդ տեսակ մեռած բնագիրութիւնների դասաւանդութիւնը կենդանացնել. բաւական է այդ դասերով լոկ չոր ու ցամաք կենդանական, բուսական կեանքը նկարագրելը. սրանք ըստերեւոյթին կան, բայց իրօք աչքակապ զննողութիւններ են. այդ կերպ պարապելը, այդ կերպ զննողութիւնները նրանց երբեք իսկական կեանքը չեն պարզիւ: Այդ նպատակին կարելի է հասնել՝ երբ պղաներն իրանք կենդանի կերպով մասնակցեն բնութեան այդ զարմանալի գործերին. և դրան հասնելու միջոցներից մէկն էլ բնական գիրութիւնների դասաւանդման մէջ դպրոցական պարտիզպանութիւնը պարունակողների, պարզաբուն ծառերի հոգատարութիւնն ու գիւղատնտեսութիւնից պարզ հասկացողութիւն տալն է: Սրանք հնարաւոր կը լինին՝ երբ դպրոցը սեփական պարտէզ ունենայ, ուր պղաները դպրոցի մէջ զննած, տեսած, կ'լինին, բնական գիրութիւնների դասերի մի մասը կարող լինին գործնականապէս մշակել, կենդանի կերպով մասնակցելով: Սա է միակ հնարաւոր ծանապարհը, և, ինչպէս տեսանք, դարերի ընթացքում յայտնի մանկավարժներն այդ միջոցն են առաջարկել: Կարծեմ կարելի է այնպէս անել, որ նոյն իսկ դպրոցների մէջ առանց մի մեծ փոփոխութիւն ձգելու, առանց որ և է զգալի ծախս, դժարութիւններ առաջ բերելու այս առաջարկածները հնարաւոր լինի գործադրել: Այդ պարտաւորով փորձեմ մի թեթեւ ուրազի՞ծ պալ, նոյն իսկ առանց դպրոցական ժամերի թիւն աւելացնելու ու ծանրութիւն առաջացնելու: Եթէ դպրոցն իսկապէս դաստիարակող է ուղղում լինել, այն ժամանակ նա պէտք է դպրոցական պարտիզպանական աշխատանքը պարտաւորիչ դարձնէ: Այս բանը պէտք է նրա գլխաւոր ուղղութիւններից մէկը լինի և առաջնակարգ խնդիրների կարգում դասուի: Այս դէպքում ի նկատի ունենալու չէ, թէ այս կամ այն դասարանը շաբաթական 16, 24 թէ 30 դաս ունի. կամ թէ դպրոցական պարտէզը փոքր, մեծ կամ նոյն իսկ 50 քառակուսի արշին է և կամ թէ դպրոցը տարեկան 5—50 կամ 100 ուսուցիչ տարեկան այդ առթիւ ծախսելու է. այդ ամենը միեւնոյնն է՝ Դրպրոցական պարտիզպանութեան աշխատանքի էութիւնը, հիմնական ուղղութիւնը ամեն մի հանգամանքի մէջ էլ միեւնոյնն է ֆալու: Մի

փոքր մօտից ի նկատի ունենանք մեր դպրոցներում եղած բնական գիտութեան վերին աստիճանի խեղճ դրութիւնը. հէնց օրինակի համար վերցնենք նոյն իսկ բարեխիղճ, գործից հասկացող ուսուցչին. նա աշխատում է այդ առարկան աշակերտներին բոլորովին վերացական, անհետաքրքիր շղարձել. և ի՞նչ կարող է անել, ի՞նչ բանի կը հասնի... Ասենք, օրինակ, խնձորենու մասին է խօսքը. նա վերցնում է մի քանի ճիւղեր, դասարան է բերում ու այդ ամենը մի ժամաջ ընթացքում բուսաբանական կողմից զննել է տալիս, բացատրում, պատմում. և—վերջ: Այսպէս էլ միւս բոյսերի և կենդանիների վերաբերմամբ, և այլն: Տղան թողնում է դպրոցը և մտնում է կեանքի մէջ. միթէ այժմ կարելի է հաւատալ, որ նա իր սովորածը կարող է գործադրել: Յաջողութիւնը միանգամայն կասկածելի է, քանի որ ասօրեայ կեանքը միշտ էլ ցոյց է տալիս, որ այդ կերպ սովորած դասը, նոյն իսկ հէնց հետեւեալ կամ մի քանի դասից յետոյ՝ մեծ մասով արդէն մոռացւում է: Անցնում է մի քանի ամիս, ուսուցիչը կրկնել տալիս տեսնում է, որ դրանցից շատ բան աշակերտների գլխից յնդւած է. և այդ հասկանալի է: Հոգեբանօրէն դա պարզ կերպով բացատրւում է, առանց տղաներին կամ ուսուցչին մեղադրելու: Եթէ աշակերտն ուրիշ առիթներ չունենայ ամբողջ խնձորենին տեսնելու, բազմակողմանի կերպով զննելու, նա շատ անգամ տանձենին խնձորենուց չի կարող զննազանել: Հէնց այդ փորձն է, այդ զննողութիւն է, որ անգրագէտ պարտիզպանին կամ նրա նման մէկին ծառերը լաւ ճանաչելու, նրանց կուլտուրական պայմանները խնամելու կերպը և՛ սովորեցնում և՛ նրան վարժեցնում է. մենք էլ ասում ենք նա փորձեալ է, փորձ ունի. թէև նա դպրոց չէ յաճախել և ոչ ոք նրան բնագիտական դասեր չէ տւել:

Ո՛չ, դպրոցական պարտիզպանական աշխատանքը, մեր ժողովրդի այս նեղ դրութեան մէջ, մեծ տնտեսական խնդիրներից մէկը պէտք է համարւի. նա մեր կեանքի մէջ նշանակութիւն է ունենալու: Սրա հետ ի հարկէ մոռանալու չէ, որ դպրոցական պարտիզպանական աշխատանքը, դաստիարակութեան տեսակէտից էլ շատ մեծ նշանակութիւն ունի: Մինչև անգամ կարելի է ասել, թէ դաստիարակութեան գործնական գործադրութիւնը այստեղ աւելի զօրեղ

կերպով աչքի է ընկնում՝ քան միւս բնագիտական առարկաների մէջ: Գուցէ մեզանից շատերը այս կամ այն գրքի մէջ գտնեն այնպիսի յօդաձևներ, նիւթեր, ուր խօսուում է ծառերի մշակութեան, պտուղների օգտի, աղղեցութեան, արտահանութեան, նրանց շքեղութեան՝ իբրև գեղեցկութեան առարկայի, կերակրի կամ պտուղների թարմ գործածութեան և այլ բաների մասին. բայց այս ամենի մասին դպրոցական չորս պատի մէջ լսելը կամ կարդալը բոլորովին այլ բան է, քան սրարտիզում, կենդանի ծառի մօտ տեսնելը, զննելը, սնձամբ փորձելը, խնամելն ու հոգ տանելը. ահա հէնց այսպեղ է գրտնւում ծառի, բոցսի իսկական դաստիարակչական մոմէնտը: Եթէ այդպէս է, ուրեմն ամեն մի դպրոց պարտաւոր է դպրոցական պարտէզ ունենալ, որի մի մասը պտղատու ծառեր են լինելու: Երբ պտղատու ծառերի մասին դասեր լինեն, այնպեղ պէտք է պարապել, խօսել, բացատրել. և իւրաքանչիւր դասարան, եթէ ոչ մի քանի, գոնէ մի մի պտղատու ծառ պիտի ունենայ, նրա վրայ ամեն տեսակ փորձեր պիտի անեն, պարուստելու, խնամատարութեան ձևերը պիտի սովորեն: Այս բանը սկսւելու է առաջին դասարանից և շարունակւելու է մինչև վերջին դասարանը, այսինքն մի քանի տարի շարունակ: Ահա այսպեղ է աշակերտը սովորելու ծառի, փայտի, ծաղիկների, կոկոնների, տերևների, պտուղների, պարուստելու և այլ բաների մասին: Նոյնպէս այսպեղ են գործնական կերպով սովորելու դարնան ժամանակ անպէտք և պտղատու ճիւղերի որոշելը, կտրելը, արմատի հողի փափկացնելը, պարարտացնելու տեսակները և այլն: Ամառն ու աշունքն էլ նոյն ծառերի պտղաբերութեանը, հիւանդութիւններին հետեւել, իրանց արածի հետեւանքը տեսնել ու վարժւել և եթէ հնար է սեփհական աշխատանքով ձեռք բերած պտուղը վաճելու: Այս կերպ վարւելով տղաները ոչ թէ միայն դրոցական վերջին տարին կարող են աշխատել, այլ ամբողջ ուսումնարանական դասընթացի ժամանակ:

Արդեօք սրա համար շատ ժամանակ է պէտք. ի հարկէ ոչ, կը պատասխանեմ: Ուսուցիչը ամեն մի բնագիտական դասին հեշտ կերպով կարող է, գոնէ շաբաթը մի անգամ 10-15 րոպէ ժամանակ գտնել. տղաներին այդ ծառերի մօտ տանել որպէս զի նրանք այդ ծառի իւրաքանչիւր շաբաթեայ փոփոխութիւնը տեսնեն, զննեն,

խօսեն դրա մասին թէ ի՞նչ փոփոխութիւններ են պատահել, համեմատեն և այլն: Եթէ դասի ժամանակ չյարմարւի, կարելի է նոյն իսկ դասերի վերջն այդ նշանակել: Այսպեղ ուսուցչի աշխատութիւնն ու հմտութիւնը մեծ դեր կարող է խաղալ. առհասարակ նա այն տեսակ նիւթերի մասին է խօսելու, որոնք բոլորի համար էական նշանակութիւն ունին. կամ թէ պիտի այնպիսի ծառեր ունենալ՝ որոնք այդ կլիմային շատ յարմար են և կարելի է ընդհանրացնել ժողովրդի մէջ և կամ թէ այնպիսի պողպատե ծառեր ներմուծել, որոնք թէև այդ կողմում գործածական չեն, բայց կարելի է աճեցնել և օգտուել: Այս պարաօրով էլ պէտք է վաղօրօք դրանց մասին կանոնաւոր ծրագիրներ մշակել, որոնք այդ կլիմայի և հանգամանքի մէջ գործնական են կամ կարող են լինել:

Այժմ մի այլ հարց. արդե՞ք սրա համար շատ փողի կարիք կը լինի. դարձեալ ոչ: Այդ ծախսն այնչափ չնչին է՝ որ նրա մասին խօսելն աւելորդ է: Ո՞ր դպրոցը մի կտոր հող չունի, կամ չի կաշող ձեռք բերել. սերմեր և մատաղ ծառեր ճարելն էլ մի առանձին մեծ ծախս չէ: Մնում է խնամատարութիւնն ու պարարտացնելու տեսակները և նիւթերը. վերջինս մեր երկրի համար շատ չնչին արժէք ունի: Գալով մի քանի կարևոր գործիքների, բահ, փէտափ և այլն. սրանք էլ կամ դպրոցն է ունենալու (դրանք բաւականին երկար ժամանակ կարող են գործածւել), կամ աշակերտներն իրանք ձեռք կը բերեն և կամ նոյն իսկ ընդհանուրից կոպէկներ հաւաքելով կարելի է լրացնել. այսպեղ միայն ցանկութիւն ու սիրտ է պէտք: Ինձ սխալ չհասկանալու համար թող ընթերցողը չընդունէ թէ դրա համար պէտք է ծառերի սերմերը ցանկելով աճեցնել կամ յետոյ նրանց զանազան տեղեր տեղափոխել: Ոչ, սա բոլորովին այլ գործ է, որը ուրիշ կերպ ծառերի ուսումնարան է աւելում. սրա համար շատ աշխատանք, հոգատարութիւն է պէտք և աւելի քան մասնագիտական ու ապագայ տարիների գործ է և ոչ դպրոցական: Բացի ուսումնարանական պարտիզպանական աշխատանքից, ես կ'առաջարկէի այդ պարտիզի հետ կապել և ունենալ փոքրիկ փորձնական դաշտ: (Kulturfeld): Սրանով բացի պողպատե ծառերից՝ հնարաւոր կը լինի այլ բուսաբանական առարկաներով նոյն կերպ զբաղւել ու գործադրել: Այս տեղում առհասարակ մշա-

կելու է այնպիսի բոյսեր, որոնք զարնանը ցանելով աշնանը հասնում վերջանում են. օրինակ, հացաբոյսերի տեսակներ, դդումներ, լոբիներ, ոսպեր, կանեփ, ճակընդեղ և այլն: Իւրաքանչիւր դասարան իր ուսուցչի առաջնորդութեամբ զարնանը պէտք է դրանք ցանէ և մինչև նրանց հունձը շարունակ նոյն խնամատարութիւնը, խօսակցութիւնը, հոգատարութիւնն ու զննողութիւնը լինելու է: Այս խօսակցութիւնները ի հարկէ պարտիզում է լինելու, այսինքն տղաները ուսուցչի հետ միասին այդ դասի կէսը իրանց ցանածները պիտի զննեն ու միւս կէսը դասարանում կրկնեն, լրացնեն, կապակցեն, համեմատեն և գործադրելու եղանակը դուրս բերեն: Նոյնպէս աշխատելու է նոյն գործնական կերպով կցել բանջարեղէնների դասաւանդութեանը՝ թփերի սրտոյնների (кружовникъ, клубника, земляника և այլն) դասաւանդութիւնը, նրանց ցանելը, խնամատարութիւնը, գործադրութիւնն ու օգուտը և այլն:

Այս բոլորի խնամատարութեան համար պէտք է իւրաքանչիւր դասարան օրական փոփոխակի երկու երկու տղաներ ունենայ: Սրանց պարտականութիւնն է առաւօտները միւսներից շուտ դալ դպրոց և դասերից առաջ ջրել (եթէ կարիք կայ ի հարկէ), աւելորդ կանաչները մաքրել և այլն: Մինչև անգամ նրանցից ոմանք իրանց ցանկութեան համաձայն, եթէ ժամանակ ունին, կարող են ճաշերից յետոյ էլ գալ ու ազատ կերպով աշխատել: Այս կերպ լինելով՝ ամառւայ արձակուրդներին էլ պարտէզը անխնամ չի մնայ:

Եթէ դպրոցական պարտիզում դեռ տեղ մնայ, այն ժամանակ պէտք է ծաղիկների մարգեր պատրաստել. ինչպէս օրինակ տեսակ տեսակ վարդենիներ, մանուշակ, շուշան, և այլն: Յոյց տալ վարդենիների, ծաղիկների ազնւացնելու, պատւաստելու կերպը, աշնանը ծաղիկների մի մասը ծաղկամանների մէջ փոխադրելու ձևը, որով նրանք ձմեռն էլ բնութեան այդ փոքրիկ հրաշալիքներից զրկւած չեն լինիլ և ծնողների, ազգականների անւանակոչութեան կամ ծննդեան տօնի առթիւ՝ սեփական աշխատանքով զլուի բերած ծաղիկներից ընծաներ կը պատրաստեն: Մնում է մի բան. արդեօք դպրոցի պարտիզում դաշտային, մարդագետնի և ճահճային բոյսեր պէտք է պահել թէ ոչ: Սրանք արդէն բուն բնագիտական և զննողական դասերի համար նշանակութիւն ունին, քանի որ սրանց

առհասարակ արհեստական կերպով չեն աճեցնում, բազմացնում, այլ աւելի բնական կերպով են առաջ գալիս, թէև գիւղական դպրոցների կամ գիւղացի աշակերտների համար կարող է նոյն իսկ տընտեսական կողմից էլ ծառայութիւն անել: Բայց դպրոցական պարտիզում առաջին տեղը պէտք է տալ պարզաբուն ծառերին, փորձական դաշտին և բանջարանոցին. քանի որ սրանց աճեցնելով, նրանց վրայ խնամք փանելով, տղաներն ուրախութիւն են զգում, մարդկային կուլտուրական աշխատանքին մասնակից լինում ու նրա վրայ ուշք դարձնում, աշխատում: Միևնոյն ժամանակ աշակերտները դպրոցական պարտիզպանութեամբ զբաղւելով՝ նրանց մէջ կամայաւորաբար հետաքրքրութիւն կը զարթնի, որի հետեանքը լինում է այն՝ որ նրանցից մի մասը, թերեւ շատերը իրանց տների համար մի մի փոքրիկ բանջարանոց, ծաղկանոց կը պատրաստեն: Նրանց համար այժմ ազատ ժամանակ բոյսերով, ծաղիկներով հետաքրքրւելն աւելի ու աւելի զրաւիչ կը դառնայ: Հետեանքը լինում է այն, որ տղայք ազատ, մաքուր, թարմ օդի մէջ աշխատելով աւելի կազմակերպւած թոքեր, առողջ մկանունքներ, զւարթ կեանք կ'ունենան. մի խօսքով բնութեան թարմութիւնը նրանց թարմացնում է: Բացի դրանից նախապաշարմունքների, սնտախապաշարութիւնների ամենամեծ թշնամին՝ ինքը բնական գիտութիւնն է և հէնց սրա մէջն էլ կաշնում է այդ առարկայի ըստ յայտնի նշանակութիւնը: Ինչպէս ասացի, նորից կրկնում եմ, որ այս տեսակէտով էլ նա պէտք է դպրոցներում խնամելի, գիտակից կերպով զննելի, աւանդելի. սրա համար էլ այդ առարկան, որի մի մասն էլ դպրոցական պարտիզպանութիւնն է, դաստիարակող և բնաւորութիւն կազմակերպող դասաւանդութեան համար անհրաժեշտ է: Դպրոցական պարտիզպանութիւնը աշակերտներին միջոց տալով անձամբ ամեն մի բոյս, ծաղիկ, տերև, պտուղ քննելու՝ զննողութիւն և զգայարանների վարժութիւն է տալիս, մի բան՝ որ նոյնպէս մարդու համար մեծ նշանակութիւն ունի, քանի որ քչերը կարող են իրանց զգայարանները ճիշտ գործադրել և կանոնաւոր ըմբռնել: Սա մեր մտքի միակողմանի զարգացման մի պախարակելի կողմն է մեզ սովորեցրել են. շատ անգամ միայն ակնոցներով գրքեր կ'սանել: Բայց չէ որ իսկականը անձամբ, փորձով ձեռք բերելը շատ գնահատելի է, քան տպած

Թղթի վերայինը: Այսպէս չանել և բաւականանալ չոր ու ցամաք տառերով՝ կը նշանակէ, շնորհիւ ժառանգական օրէնքի, մեր տղաները ժամանակի ընթացքում ոչ կանոնաւոր տեսնել, ոչ ճաշակել և ոչ էլ հոտորել պիտի կարողանան բառիս բուն նշանակութեամբ: Պարտիզպանական աշխատանքը նոյնպէս առաջացնում է էսթետիկական հետաքրքրութիւն դէպի գեղեցիկը, բարձր. իսկ սրանք զգացմունքների վրայ բարերար ազդեցութիւն ունին: Այս աշխատանքը իր ճշմարտութեամբ ոչ թէ միայն բնաւորութեան կազմակերպութեանը օգնում է, այլ դրա շնորհիւ տղաները գեղեցիկ հասկացողութեամբ ոգևորւում են. սա էլ ի հարկէ նրա խղճի կամ զգացումների վրայ խոր ազդեցութիւն ունի: Ճշմարտութիւն, գեղեցկութիւն սրան են պարկանում. ուրեմն կը նշանակէ նա իսկապէս ճշմարիտ, կրթող ուսուցման առարկայ է: Ձեռքի և պարտիզպանական աշխատանքի միջոցով տղաները ձեռքի վարժութիւն, կարգապահութիւն, ճշտապահութիւն, մաքրութիւն, ինչպէս թիւն, համբերութիւն, ճաշակի, գեղեցիկ զարգացում և ուշադրութիւն ձեռք կը բերեն: Վերջապէս աշխատանքի շնորհիւ տղայք գործելու ձգտումը, ընդանիքի, կեանքի կարիքները աւելի շուտ և աւելի ճիշտ կերպով կը զգան: Այսպիսով աշակերտները մտաւոր, խելացի դատողութեան ու գիտակցութեանը գործնական, գննական կերպով են հասնում. իսկ այս բանը նշանակում է՝ թէ իրանք իրանց ընդունակութիւնները կեանքի իսկական պահանջների համաձայն են գործադրում, նրանցով զբաղւում, ինքնուրոյն կերպով գործում, սեփական ուժերով անկախ առաջ գնում ու կատարելագործւում: Ահա պարտիզպանական աշխատանքի էական առաւել կողմերը. հա այս տեսակ դպրոցի դասաւանդութիւնը շատ կանոնաւոր կերպով կը լրացնէ դաստիարակութեան նշանաւոր և էական մոմէնտը:

Այս ամենը կատարելու համար ի հարկէ մեծ զոհաբերութիւն պէտք է, մանաւանդ երբ այդ ամենը փոքրից սկսի և տարեցտարի ընդլայնացի: Եթէ ուսուցիչներից ոմանք այդ բանի համար այնչափ էլ պատրաստի չեն՝ այդ էլ հնչու է լրացնել. բաւական է, որ նրանք ցանկութիւն ունենան գրքերի, գիտակ մարդկանց միջոցով թէօրիան և գործնականը սովորել, անձամբ փորձեր անել: Նամանաւանդ բնա-

կան գիտութեան ուսուցիչներն այս դէպքում որպէս պատրաստի մարդիկ՝ միւսների համար օգտակար կարող են լինել: Երբ վերջիշեալները մեր միջնակարգ դպրոցներում ներմուծի և զործագրւի, երբ նրանք օրինակելի փորձնական դպրոցական պարտէզներ ունենան՝ ահա այդ ժամանակ զործը շատ հեշտանալով, մի գեղեցիկ օր էլ մեր երիտասարդութիւնն ու ժողովուրդը կուլտուրական այդ պողոկոս օգտւելով՝ յառաջ կը դիմեն: